



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 3 ՅՈՒԻՍ, 2023

**ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ**  
(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

**ՍԱՂՄՈՍ 37**

**ԶԱՐԵՐՈՒՆ ՈՒ ԲԱՐԻՆԵՐՈՒՆ ՎԱԽՃԱՆԸ**

**Ս**իրբոյ մի նեղեր չարերուն համար,  
ոչ ալ նախանձէ անօրէն մարդոց:  
Որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս,  
պիտի չորնան այնպէս՝ ինչպէս դալար բոյսը կը չորնայ:  
Տիրոջ վարահէ եւ բարիք ըրէ  
որպէսզի երկրի վրայ ապրիս  
եւ ապահովութիւն վայելես:  
Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ,  
եւ ինք սրբիդ բոլոր բաղձանքները պիտի փայ:  
Քու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վարահ եղիր,  
ան ամէն ինչ պիտի քնօրինէ:  
Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ,  
իրաւունքդ՝ կէտօրուան արեւուն պէս:  
Լռութեամբ հնազանդէ Տիրոջ,  
սիրբոյ մի նեղեր անոնց համար՝  
որ անիրաւ յաջողութեան կը հասնին,  
եւ անոնց համար՝ որոնք չարիք կը նիւթեն:  
Զսպէ բարկութիւնդ, մէկ կողմ դիր գայրոյթդ.  
սիրբոյ մի նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես:  
Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին,  
մինչդեռ Տիրոջ վարահողները երկիրը պիտի ժառանգեն:  
Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ալ գոյութիւն պիտի չունենայ.  
որքան ալ փնտրես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես:  
Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը,  
եւ կարարեալ խաղաղութիւն պիտի վայելեն:

**ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ**

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուր Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնս ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



**ՉԱՐԵՐՈՒՄ ԵՒ ԲԱՐԻՆԵՐՈՒՄ ՎԱՆՃԱՆԸ**

Երկարապարում այս Սաղմոսը եթե ուզենք խորացնել եւ երկու բառով ներկայացնել, կարելի է ըսել համբերութիւն եւ կարարեալ վարահութիւն Աստուծոյ: Յաճախ կը մոռնանք Սողոմոն Իմաստունին այն խօսքը որ կըսէ. «Ամէն ինչին ժամանակը կայ» 3:18: Իսկ երբ կը կարդանք Ծննդոց գիրքի 1-11 գլուխները, ապա այնքան կը ներկայացնէ մեզի ամէն ինչին սկիզբը: Ուրեմն եթէ ամէն ինչին սկիզբը կայ, անխուսափելիօրէն ամէն ինչին նաեւ վախճանը կայ: Մեզ պակտողը համբերութիւնն է եւ կարարեալ վարահութիւնը առ Աստուած: Անոր համար նաեւ Քրիստոս պիտի ըսէ, «Ով որ մինչեւ վերջ համբերէ, ան է որ պիտի փրկուի»: Այսօրուան Սաղմոսը կարելի է բաժնել հետեւեալ մասերու:

1-11 հմր Այսօր երբ կը դիտենք մեր շուրջը, այնպէս ինչպէս անցեալին եւս, լեցուն է չարութեամբ, եւ կարծէք հետզհետէ այդ չարութիւնը կը սաստկանայ, եւ արիկա նաեւ պարճառ կըլլայ շարերուն սիրտ նեղութեան կամ նախանձի: որովհետեւ զարմանալիօրէն այնպէս կը թուի, եւ այդպէս է, որ այդպիսիներ աւելի յաջողութիւն կը գտնեն, բարօր կեանք կունենան, եւ կարծէք որեւէ վնաս ալ չի հասնիր անոնց: Ի րես այս իրողութեան, Աստուծոյ մարդը, արդարը եթէ կարելի է ըսել, կը սկսի շփոթուիլ, գայթակղիլ, եւ ինչու չէ նաեւ, կը սկսի ինք եւս մտածելու եւ ըսելու, այսքան Աստուծոյ ճամբուն մէջն եմ, ընդհակառակը, նեղութիւնները, դժուարութիւնները աւելի են, մինչդեռ ամբարիշտը աւելի հանգիստ կեանք է որ կ'ապրի: Ուրեմն, աւելի լաւ չէ՞ անոր հետեւիլ, անոր ճամբան ընդօրինակել: Յաճախ նաեւ կու գանք այն ազրակացութեան, որ արդէն մէկ կեանք մըն է ապրելիքը, կեր, արք, ուրախ լեր, յեղոյ մեռնիք երթանք: Նայինք ամբարիշտին ինչ հանգիստ կեանք կ'ապրի, եւ կընէ այն ինչ որ կ'ուզէ: Այո, երեւոյթը այդպէս է, բայց այդ երեւոյթը ժամանակաւոր ու խափուսիկն է: Կրնա՞ք ըսել, որքան է անոր կեանքի րեւոյթութիւնը, 80, 90, մի գուցէ 100, այդ ալ ով գիտէ եթէ հիւանդութեամբ ալ բռնուած չլլայ: Յիշենք Քրիստոսի պարմած առակը մեծահարուստ եւ աղքատ Ղազարոսին: Ժամանակաւոր վայելք յաւիտենական փանջանք, ժամանակաւոր փանջանք՝ յաւիտենական վայելք: Ահա Սաղմոսերգուն Դաւիթ նախ կու գայ ինքզինքին յիշեցնելու, ապա բոլոր անոնց որոնք պիտի կարդանք այս Սաղմոսը իր օրինակով սիրտը չնեղելու չարերուն համար, եւ անձրէն մարդոց չնախանձելու: Ինչո՞ւ: Որովհետեւ անոնք շուրով պիտի խամրին, եւ կը նմանցնէ խոտին, եւ պիտի չորնան: Այո, շուրով մի գուցէ վաղը, միւս օրը կրնայ չլլայ: Մենք է որ անհամբեր ենք, եւ կ'ուզենք անմիջապէս արդիւնքը տեսնել: Դիտենք մեր թ ինչպէս ամէն ինչ իր ժամանակը ունի: Այսօրուան աշխարհի դրուածքն է առազընթաց, որ մեր մէջ կը պակսեցնէ համբերելու յարկութիւնը: Անոր համար ալ ամէն ինչ առագ եւ շուրով կ'ուզենք ունենալ կամ արդիւնքը տեսնել: Նոյնպէս ալ չարին կամ անօրէնութեան պարագային: Երբ կըսէ շուրով պիտի խամրուին, չորնան: Եւ մենք անհամբեր կը սպասենք ըսելով, էի երբ պիտի չորնայ, փարիներէ ի վեր այս է վիճակը: Դաւիթ ինքզինքին կը յիշեցնէ, Տիրոջ վարահէ եւ բարիք ըրէ, որովհետեւ երբ նախանձիս այդ քեզ պիտի առաջնորդէ չարիքի եւ պիտի ուզես նոյնը ընել: Անոր համար ալ կը զգուշացնէ: Բարիք ըրէ, որպէսզի ապահովութիւն վայելես, եւ այն երկիրը որ Տէրը խոստացաւ փառու իբրեւ ժառանգութիւն ապրիս անոր մէջ: Յաճախ ի րես չարերուն եւ անօրէններուն յաջողութեան, կու գանք ըսելու ինչ ուրախ են, բայց Սաղմոսերգուն կըսէ Տէրը ինք թող ըլլայ քու ուրախութիւնդ, եւ Ինք է որ սրտիդ բոլոր բաղձանքները պիտի փայ: Եւ կեանքդ Տիրոջ յանձնէ եւ վարահ եղիր Ան ամէն ինչ պիտի փնտրին:

Կրկնութեան գնով դարձեալ կըսէ. «Լռութեամբ հնազանդէ Տիրոջ», լռութեամբ որպէսզի կարենաս լսել Իր ձայնը: Զսպէ բարկութիւնդ, եւ մէկ կողմ դիր գայրոյթդ, որովհետեւ եթէ չընես այդպէս դուն ալ կրնաս մաղքի մէջ իյնալ եւ չարիք գործել: Որովհետեւ դուն ալ եթէ չարիք գործես չարագործները շուրով պիտի կորսուին: Մինչ եթէ Տիրոջ վարահիս պիտի ժառանգես Աստուծոյ պարաստածը, եւ կարարեալ խաղաղութիւն պիտի վայելես: